ԿԱՐՈ ԳԱԼՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ

ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՍԱՄՑԽԵԻ ՈՒ ՋԱՎԱԽՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

ԺԶ. դարի վերջից մինչեւ 1940-ական թթ. սկիզբը Սամցխեի եւ Ջավախքի տարածքում ընթացող ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում ձեւավորվեց այժմ մեսխեթցի թուրքեր անվամբ հայտնի էթնոկրոնական խումբը: 1944 թ. ԽՍՀՄ իշխանությունների կողմից նրանք բռնի վերաբնակեցվեցին Միջին Ասիայում, ինչն էլ, թերեւս, հանդիսացավ մեսխեթցի թուրքերի ինքնության ձեւավորման վերջնական փուլը: Նշված ժողովրդագրական փոփոխությունների շարժը մինչ այժմ մնում է թույլ ուսումնասիրված: Այս հարցի ուսումնասիրությունը կարեւոր նշանակություն ունի նաեւ հայերիս համար, քանի որ Սամցխեի ու Ջավախքի տարածքում մեսխեթցի թուրքերի նախնիների հետ մեկտեղ ի սկզբանե բնակվել են նաեւ տեղաբնակ հայեր: Սույն հոդվածի խնդիրն է ուսումնասիրել նշված ժամանակահատվածում Սամցխեում եւ Ջավախքում բնակվող էթնիկ խմբերի եւ նրանց կրոնական կազմը, համակարգված ներկայացնել ժողովրդագրական փոփոխությունների պատկերը եւ պարզել դրա շարժը: Այդ նպատակով ուսումնասիրվել են ԺԶ. դարի վերջից մինչեւ 1939 թ. անցկացված մարդահամարների, վիճակագրական եւ այլ անուղղակի աղբյուրների հաղորդած տվյալները, բնակչության թվի եւ կազմի փոփոխության վերաբերյալ:

Սամցխեի ու Ջավախքի բնակչության թվի եւ էթնիկ կազմի մասին հաղորդող մեզ հասած ամենահին աղբյուրը «Գյուրջիստանի վիլայեթի մեծ գրանցամատյանն» է: Այն կազմվել է 1595 թ. օսմանյան իշխանությունների կողմից՝ Սամցխե-Սաաթաբագոն (Սամցխեի աթաբեկությունը) նվաճելուց հետո հարկահանության կազմակերպման նպատակով: Գրանցամատյանի տվյալները թույլ են տալիս պատկերացում կազմելու շրջանի բնակչության էթնիկ եւ կրոնական կազմի մասին գրանցված հարկատու ընտանիքների ավագների անունների հիման վրա: Այդ

տվյալների համաձայն՝ մահմեդական անուններով բնակիչների թիվն աննշան է, եւ գերակշռում են քրիստոնյաների անունները[1]։ Հարկ է նշել, որ գրանցամատյանում հիշատակված են նաեւ մեծ թվով հայկական անձնանուններ՝ Ավաքիս ձե[2] (Ավագ), Առաքելիս ձե, Վարդանիս ձե (նաեւ Վարթանիս ձե կամ Վարթանաս ձե), Կարապետիս ձե կամ Կարապետաս ձե, Միկիրտիչիս ձե կամ Միկիրտիչաս ձե (Մկրտիչ), Սարգիսիս ձե կամ Սարքիսիս ձե կամ Սարգիզաս ձե, Խաչատուրիս ձե կամ Խաչաթուրիս ձե եւ այլն[3]։ Վերոնշյալը թույլ է տալիս պնդել, որ մինչ Սամցխեի աթաբեկության նվաճումը Օսմանյան կայսրության կողմից, այնտեղ բնակվում էին մեծ թվով հայեր։

Օսմանյան կայսրության տիրապետության շրջանում Ախալցիխեի փաշայության բնակչության էթնիկ եւ կրոնական կազմն ամբողջությամբ արտացոլող փաստաթղթերի բացակայությունը թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմել ժողովրդագրական փոփոխությունների մասին։ Այդ ժամանակաշրջանի մասին տեղեկությունները մեզ են հասել հիմնականում ճանապարհորդների եւ պատմիչների շնորհիվ։ Օսմանյան ճանապարհորդ Էվլիա Չելեբիի հաղորդմամբ՝ ԺԷ. դարի կեսերին բնակիչները սուննի մահմեդականներ էին, բայց խոսում էին վրացերեն։ Նա մեջբերում է մի շարք վրացերեն բառերի եւ արտահայտությունների օրինակներ[4]։ ԺԷ. դարի երկրորդ կեսին Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի հաղորդմամբ՝ շրջանում բնակվում էին ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ մահմեդականներ։ Նա գրում է, որ Ախալցիխեում բնակվում էին թուրքեր, հայեր, վրացիներ, հույներ եւ հրեաներ[5]։ Վախուշտի Բագրատիոնիի տեղեկությունների համաձայն՝ ԺԸ. դարի սկզբին նույն գավառում փոքր թվով քրիստոնյաներ էին մնացել[6]։ ԺԸ. դարի երկրորդ կեսին, սակայն, ճանապարհորդ Գյուլդենշտեդտի տեղեկությունների համաձայն՝ բնակիչները քրիստոնյա էին, նրանց միայն փոքր մասն էր

---

[1] *Տե՛ս* А. С. Тверитинова, Аграрный строй Османской империи XV–XVII вв., Документы и материалы, Москва, *1963, էջ 158–162։*

[2] *«Ձե» վերջավորությունը վրացերենում գրվում է արական սեռի ներկայացուցիչների հայրանուններից հետո։*

[3] *Տե՛ս* გვარები სამცხე-ჯავახეთში, კოლაში, არტაანში, ტაოსა და ბორჯომის ხეობაში http://www.geogen.ge/ge/treasurege/84/4304/ *(18.12.2018)։*

[4] *Տե՛ս* Э. Челеби, Книга путешествия, Вып. 3, Москва, *1983, էջ 184, 188–190։*

[5] *Տե՛ս* Ж. Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672–1673 гг., Тифлис, *1902, էջ 160։*

[6] *Տե՛ս* **ვახუშტი**, აღწერა სამეფოსა საქართველოსა, ლომოური თ, ბერძენიშვილი ნ. (რედ.), სტალინის სახელობის თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის გამომცემლობა, თბილისი, *1941, էջ 123։*

մահմեդականություն ընդունել, եւ խոսում էին ինչպես վրացերեն, այնպես էլ թաթարերեն (թուրքերեն)[7]։

Այսպիսով՝ նշված աղբյուրները Սամցխեի ու Ջավախքի բնակչության թվի, էթնիկ եւ կրոնական կազմի մասին հստակ տեղեկություններ չեն հաղորդում եւ նույնիսկ հակասում են միմյանց։ Այնուամենայնիվ, այդ աղբյուրների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ԺԷ. դարի ընթացքում շրջանի բնակչության էթնիկ բազմազանությունը պահպանվում էր, սակայն փոխվում էր կրոնական պատկերը։ Չի բացառվում, որ մինչ 1828 թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտը մահմեդականների թիվն ավելացել է ոչ միայն տեղի բնակչության մահմեդականացման, այլեւ շրջանում բնակություն հաստատած եկվոր թյուրքախոս խմբերի հաշվին։ Այս է վկայում ժամանակի ընթացքում բնակչության անցումը թուրքերենով հաղորդակցվելուն։ Տրամաբանական կլինի ենթադրել, որ բնակչության թուրքերենին անցնելու գործընթացն եղել է երկլեզվության միջոցով, ինչը չէր կարող տեղի ունենալ առանց թուրքախոսների հետ անմիջական շփման։ ԺԹ. դարի սկզբի հեղինակները նույնպես կարծում էին, որ տեղի է ունեցել թուրքերի ներգաղթ, եւ նրանց առանձնացնում էին այլ մահմեդականներից[8]։ Տեղի թուրքախոս մահմեդականները եւս առանձնացնում էին իրենց այլ թյուրքախոս խմբերից եւ անվանում իրենց «յերլի»[9], ինչը թուրքերենից թարգմանաբար նշանակում է տեղացի։

Ռուսական կայսրության շրջանի աղբյուրներում հիշատակված են նաեւ այլ թյուրքախոս մահմեդականների խմբեր, որոնք հայտնի էին «թերեքեմե», «թարաքամա» կամ «թարաքյամա» անվանումներով։ Որոշ աղբյուրներում նրանցից առանձնացվում են կարափափախները[10]։ Մերձավոր Արեւելքում թերեքեմեն քոչվոր կամ կիսաքոչվոր խմբերի հավաքական անվանում է։ «Թերեքեմե» բառը ծագում է «թյուրք» բառի

---

[7] Տե՛ս И. А. Гильденштедт, Географическое и статистическое описание Грузии и Кавказа из путешествия г-на академика И. А. Гильденштедта через Россию по Кавказским горам в 1770, 71, 72 и 73 годах, Санкт-Петербург, *1809*, էջ *162–163*։

[8] Տե՛ս О. Евецкий, Статистическое описание Закавказского края, Санкт -Петербургъ, *1835*, էջ *32*, *179*. տե՛ս նաեւ Л. П. Загурский, Поездка в Ахалцихский уездв 1872 г., Записки Кавказского отдела Императорского русского географического общества, кн. 8, Тифлис, *1873*, էջ *5*, *57*։

[9] Տե՛ս O. Pentikainen, T. Trier, Between Intedration and Ressetlement: The meskhetian Turks, European Centre for Minority Issues, ECMI Working Paper, *2004*, № *21*, էջ *9*.

[10] Л. П. Загурский, Этнологическая классификация кавказских народов (Приложение к Кавказскому календарю на 1888 г.), Тифлис, *1887*, էջ *11*.

արաբերեն հոգնակի ձեւից։ «Կարափափախ» անվանումն, ամենայն հավանականությամբ, տվել են թուրքերը[11]։

Ախալցիխեի թարաքամաների ծագման վերաբերյալ տարբեր կարծիքներ են արտահայտվել։ Կարծիքներից մեկի համաձայն՝ նրանք տեղափոխվել են Բորչալուից եւ Ղազախից, ենթադրաբար, ԺԸ. դարի վերջում[12]։ Մեկ այլ տեսակետի համաձայն՝ նրանք Կարսի շրջանից տեղափոխված թուրքմեններ էին[13]։ Սակայն, հաշվի առնելով, որ ԺԹ. դարի հեղինակները թուրքմեններին առանձնացնում էին թարաքամաներից, առաջին վարկածն ավելի իրատեսական է թվում։ Թարաքամաներն ու թուրքմենները ԺԹ. դարի կեսերին ներկայացվում էին հավաքական թաթար անվանումով, ինչը պայմանավորված էր թուրքախոս մահմեդականների՝ «յերլիների» եւ նրանց միջեւ լեզվական տարբերությունով[14]։

Քրդերի Սամցխե եւ Ջավախք ներթափանցելու ժամանակաշրջանի վերաբերյալ հստակ տեղեկությունները բացակայում են։ Վրացական պատմագրության մեջ ընդունված է համարել, որ դա տեղի է ունեցել մինչեւ ԺԸ. դարի վերջերը։ Ա. Խախանովն առանձնացնում էր քրդական երկու ցեղ՝ զիլանլի եւ խամիլանլի[15]։ Վրացի պատմաբան Շ. Լոմսաձեն հիշատակում է ջունիկ եւ խամիլանլի խմբերը[16]։

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում՝ Ախալցիխեի փաշայության 10 սանջակներն անցան Ռուսական կայսրության տիրապետության տակ։ Այդ սանջակների տարածքում կազմվեց Ախալցիխեի գավառը, որն էլ 1874 թ. բաժանվեց Ախալցիխեի եւ Ախալքալաքի գավառների։ Պատերազմի հետեւանքով Ռուսական կայսրությանն անցած Ախալցիխեի գավառից, հատկապես քաղաքներից, մահմեդական բնակչության մի մասը տեղափոխվեց Օսմանյան կայսրության տարբեր

---

[11] *Տե՛ս* Н. А. Баскаков, Карапапахи, или терекеме, и изучение их языка (из материалов по азербайджанским диалектам Армении) // Краткие сообщения Института народов Азии, вып. 65, «Наука», *1964, էջ 27։*

[12] *Տե՛ս* О. Евецкий, *նշւ. աշխ., էջ 179. տե՛ս նաեւ* П. П. Зубов, Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях: часть 4, Санкт-Петербургъ, *1835, էջ 295. տե՛ս նաեւ* **Შ. ლომსაძე**, სამცხე-ჯავახეთი, „მეცნიერება“, თბილისი, *1975, էջ 332։*

[13] *Տե՛ս* Л. П. Загурский, Этнологическая классификация кавказских народов (Приложение к Кавказскому календарю на 1888 г.), *էջ 10–11։*

[14] *Տե՛ս* S. Ersöz, Ahıska'da iki büyük ağız grubu: terekeme ve yerli türk ağız // Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi Sayı, № *2, 2014, էջ 105–115։*

[15] *Տե՛ս* А. Хаханов, Месхи (Этнографический очерк) // Этнографическое обозрение, № 3, *1891, էջ 4–5։*

[16] *Տե՛ս* **Შ. ლომსაძე**, *նշւ. աշխ., էջ 335։*

շրջաններ։ Բեկերի զգալի մասը նույնպես նախընտրեց գաղթել Օսմայնան կայսրություն[17]։ Բնակչության տեղաշարժի ծավալները բարդ է որոշել։ Շոթա Լոմսաձեի գնահատմամբ՝ 1828–1829 թթ. շրջանի բնակչությունը 100 հազարից նվազեց մինչեւ 45 հազարի[18]։ Զագուրսկիի կարծիքով՝ գյուղերի բնակիչներից քչերն են արտագաղթել[19]։

1829–1830 թթ. Էրզրումի վիլայեթից Ախալցիխեի եւ Ախալքալաքի գավառներ տեղափոխվեցին մոտ 7 հազար հայկական ընտանիքներ, որոնց մեծ մասը հաստատվեց Ախալքալաքի, Ախալցիխեի եւ Ծալկայի շրջաններում։ Որոշ մասն էլ ճանապարհին հաստատվեց Շիրակի ու Փամբակի շրջաններում, ինչպես նաեւ Գյումրիում[20]։ Ախալցիխեի եւ Ախալքալաքի շրջաններում հաստատված հայերի թիվն անցնում էր 20 հազարից։ Հարկ է նշել, որ ըստ այդ ժամանակաշրջանի աղբյուրների՝ վերոնշյալ տարածքներում բնակվում էին նաեւ տեղաբնակ կաթոլիկ հայեր, որոնք հիմնականում խոսում էին թուրքերեն։ Գաղթական հայերի մեծ մասը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ էին եւ խոսում էին հայերեն[21]։ Ա. Մելքոնյանի գնահատմամբ տեղաբնակների թիվն անցնում էր 10 հազարից[22]։ Օսմանյան կայսրությունից ներգաղթել էին նաեւ մի քանի տասնյակ հույների եւ քրդերի (եզդիների) ընտանիքներ։

1830-ականների տվյալներով՝ Ախալցիխեի գավառի բնակչությունը կազմում էր 70 հազար մարդ, որոնցից 13.500-ը բնակվում էին Ախալցիխե քաղաքում[23]։ Գավառի բնակչությունը բաղկացած էր հայերից, վրացիներից, քրդերից, հույներից, գնչուներից, կարափափախներից եւ թուրքերից կամ՝ օսմանցիներից։ Բնակչության էթնիկ եւ կրոնական կազմի մասին տեղեկությունները բացակայում են։ Առնվազն 25–30 հազարը միայն Էրզրումի փաշայությունից գաղթած եւ տեղաբնակ հայերի թիվն էր։ Վրացիների փոքր մասն ուղղափառ էր։ Մեծ մասը մահմեդականացվել էր թուրքական տիրապետության տարիներին։ Նախկինում Ախալցիխեի փաշայությունում հաստատված քոչվոր անասնապահությամբ զբաղվող քրդերը սուննի մահմեդականներ էին։ Օ. Եւեցկիի հաղորդմամբ

---

[17] Տե՛ս С. С. Эсадзе, Историческаая записка об управлении Кавказом, т. 1, Тифлис, 1907, էջ 563։

[18] Տե՛ս Შ. ლომსაძე, նշւ. աշխ., էջ 317–320։

[19] Տե՛ս Л. П. Загурский, Поездка в Ахалцихский уездв 1872 г., էջ 8։

[20] Տե՛ս Ա. Մելքոնյան, Ջավախքը 19-րդ դարում եւ 20-րդ դարի առաջին քառորդին, Երեւան, 2003, էջ 188–189։

[21] Տե՛ս О. Евецкий, նշւ. աշխ., էջ 180։

[22] Տե՛ս Ա. Մելքոնյան, նշւ. աշխ., էջ 197։

[23] Տե՛ս О. Евецкий, նշւ. աշխ., էջ 27, 179. տե՛ս նաեւ П. П. Зубов, նշւ. աշխ., էջ 291։

քրդերի մի մասը գաղթել էր Էրզրումի վիլայեթից, հանդիսանում էր Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդ եւ խոսում էր քրդերենի խառնուրդով հայերեն[24]։ Այս տեղեկությունը բավականին հետաքրքրական է, քանի որ դրանից հետո Ջավախքում բնակվող Հայ Եկեղեցու հետեւորդ քրդերի մասին տեղեկություններ չկան։ Կարելի է ենթադրել, որ դա եղել է փոքր թվով քրիստոնյա եզդիների համայնք, որը տարրալուծվել է հայերի մեջ։ Այս տեսակետի օգտին կարող է խոսել Ջավախքում, մասնավորապես՝ Արագովա (Արագվա) գյուղում հանդիպող Քուրդօղլյան ազգանունը։ Հնարավոր է նաեւ, որ այդ մարդիկ եղել են հայեր, որոնք Արեւմտյան Հայաստանում բնակվել են քրդերի հարեւանությամբ եւ իրենց խոսքում մեծ թվով քրդերեն բառեր էին օգտագործում։

Կարափափախները (թերեքեմենները) Բորչալուից եւ հարակից շրջաններից տեղափոխվել էին Ախալցիխեի տարածք։ Ավելի վաղ շրջանում տեղափոխվածները քրդերի նման քոչվորներ էին, իսկ ԺԸ. դարի վերջին եւ ԺԹ. դարի սկզբին հաստատվածները նստակյաց կյանք էին վարում[25]։ 1840–1846 թթ. Տավրիկյան եւ Վորոնեժի նահանգներից Ջավախք արտաքսվեցին «դուխոբոր» աղանդին պատկանող մոտ 4 հազար ռուսազգի գյուղացիներ[26]։

1840–1850-ականների տվյալների համաձայն՝ Ախալցիխեի գավառում բնակչության թիվը նվազել է եւ հասել 48 հազարի[27]։ Դա կարող է բացատրվել, թերեւս, ինչպես մահմեդական բնակչության շարունակվող արտագաղթով, որի թիվը մոտ 20 հազար էր, այնպես էլ ավելի վաղ հաշվարկների անճշտությամբ։

1864 թ. տվյալներով Ախալցիխեի գավառում բնակվում էր մոտ 75,4 հազար մարդ, այդ թվում, 33,8 հազար Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդ (44,8%), 8,7 հազար հայ կաթոլիկ (11,5%), 23 հազար մահմեդական (30,5%), 4,4 հազար ուղղափառ (5,8%), 3,5 հազար ռուս աղանդավոր (4,6%) եւ 1,9 հազար հրեա (2,5%)[28]։ Գավառի բնակչության կրոնական կազմը մոտավոր պատկերացում է տալիս նաեւ էթնիկ կազմի մասին։ Մահմեդականների մոտ 20 հազարը նշված է որպես

---

[24] О. Евецкий, *նշվ. աշխ., էջ 180։*

[25] *Տե՛ս անդ, էջ 179–180. տե՛ս նաեւ* П. П. Зубов, *նշ. աշխ., էջ 292–295։*

[26] Ш. ლომსაძე, *նշվ. աշխ., էջ 338։*

[27] *Տե՛ս* Кавказский календарь на 1851, Канцелярия Кавказского наместника, Тифлис, 1850, *էջ 102։*

[28] *Տե՛ս* Сборник статистических сведений о Кавказе, под ред. И. В. Воронова, т. I, Тифлис, 1869, *էջ 15–18.*

մահմեդական վրացի[29]։ Այսպիսով՝ վրացիները շուրջ 24 հազար էին (գավառի բնակչության մոտ 30%-ը), հաշվի առնելով, որ նշված ուղղափառները վրացիներ էին, հետեւաբար մահմեդականները՝ մոտ 3 հազար։

1870 թ. տվյալներով՝ Ախալցիխեի գավառում բնակվում էր 80 527 մարդ[30]։ Բնակչության էթնիկ կազմը տոկոսներով ներկայացնելիս ունի հետեւյալ պատկերը՝ 48% հայեր (38,6 հազ.), 39,5% վրացիներ (32,6 հազ.), 5,5% ռուսներ (4,4 հազ.), 4% թաթարներ (3,2 հազ.), 2% հրեաներ (1,6 հազ.) եւ 1% քրդեր (մոտ 800 մարդ)[31]։

1873 թ. վիճակագրական տվյալներում տարածաշրջանի բնակչությունը ներկայացված է ըստ Ախալցիխեի եւ Ախալքալաքի գավառների՝ առանձին, որոնց ընդհանուր բնակչության թիվը 93.284 էր։ Այսպես, Ախալցիխեի գավառում բնակվում էր 43.377 մարդ, որից 21 402 «ադրբեջանական թաթարներ» (49,3%), 15.415 հայ (35,5%), 3239 «բառի նեղ իմաստով վրացի» (7,5%), 1972 հրեա (4,5%), 451 քուրդ (1%), 126 ռուս (0,3%), իսկ մնացած 1,9% կազմում էին «հյուսիսային թաթարները», հույները եւ այլ ազգերի ներկայացուցիչները։ Ախալցիխե քաղաքի բնակչության թիվը հասնում էր 13 265 մարդու, որից միայն 10 702-ը ազգությամբ հայ էին, 422-ը՝ վրացի[32]։ Քաղաքում էին բնակվում նաեւ հրեաների, հույների եւ ռուսների մեծ մասը։ Մահմեդականները եւ վրացիների մեծ մասը բնակվում էին գավառի գյուղերում։

Ախալքալաքի գավառում բնակվում էր 49.909 մարդ, որից 36.163 հայ (72,5%), 5326 ռուս (10,7%), 4404 «ադրբեջանական թաթարներ» (8,8%), 2809 վրացի (5,6%), 292 քուրդ (0,6%), 219 թուրք (0,4%), իսկ մնացած 1,2%-ը կազմում էին հույները, հրեաները եւ այլ ազգերի ներկայացուցիչները[33]։

Ի տարբերություն նախորդ տարիների վիճակագրության, 1873 թ. տվյալներում վրացի մահմեդականների մասին տեղեկություններ ներկայացված չեն։ Նրանք թարաքամաների եւ թուրքմենների հետ ընդգրկված են առաջին անգամ կիրառվող «ադրբեջանական թաթարներ» անվան տակ։ «Բառի նեղ իմաստով վրացիներն», ըստ էության, միայն ուղղափառ վրացիներն են, ինչը երեւում է գավառների կրոնական կազմն

[29] Տե՛ս անդ, էջ 23։
[30] Տե՛ս Сборник сведений о Кавказе, под ред. Н. Зейдлица, т. 2, Тифлис, 1872, էջ 351։
[31] Տե՛ս Сборник сведений о Кавказе, под ред. Н. Зейдлица, т. 1, Тифлис, 1871, էջ 291։
[32] Տե՛ս Сборник сведений о Кавказе, под ред. Н. Зейдлица, т. 7, Тифлис, 1880, էջ XVIII–XXI:
[33] Տե՛ս անդ։

արտացոլող տվյալներից։ Ախալցիխեի գավառում բնակվում էր 3418 ուղղափառ։ Գավառի վրացիների, ռուսների եւ հույների ընդհանուր թիվը 3 426 է։ Մահմեդական վրացիների թիվը չպետք է գերազանցեր 17–18 հազարը, քանի որ 1870 թ. թաթարների թիվն առանց նրանց 3,2 հազար էր։ Բացի այդ, Ա. Խախանովի գնահատմամբ՝ 1873 թ. թարաքամաները կազմել են Ախալցիխեի գավառի բնակչության 3,9%, իսկ թուրքմենները՝ 1,1%-ը[34]։ Հայերի ճնշող մեծամասնությունը կազմում էին Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ՝ Ախալցիխեում՝ 14 995 եւ Ախալքալաքում՝ 36 163 մարդ։ Կաթոլիկ հայերի թիվը Ախալցիխեի գավառում 2 420 է, իսկ Ախալքալաքի գավառում՝ 4991[35]։

1886 թ. վիճակագրական տվյալներով գավառների ընդհանուր բնակչությունը կազմում էր 122.590 մարդ։ Ախալցիխեի գավառում բնակվում էր 58.791 մարդ, որից 23.185 վրացի (39,4%), 16.125 թաթար (27,4%), 15.042 հայ (25,6%), 1266 քուրդ (2,2%), 2641 հրեա (4,5%), 180 ռուս (0,3%), 31 թուրք (0,05%), իսկ 0,6%-ը հույն, լեհ եւ այլ ազգեր։ Վրացիների 14,9 հազարը նշված է որպես մահմեդական։ Ախալքալաքի գավառում բնակվում էր 63 799 մարդ, որից 46 384 հայ (72,2%), 6674 ռուս (10,5%), 6091 թաթար (9,5%), 3741 վրացի (5,9%), 694 քուրդ (1,1%), իսկ 0,8%-ը հույն, գնչու (բոշա), հրեա եւ այլ ազգեր[36]։

1897 թ. առաջին համառուսաստանյան մարդահամարի տվյալներով՝ շրջանի բնակչության թիվը կազմել է 141.546 մարդ։

Ախալցիխեի գավառում բնակվում էր 68.837 մարդ, որից 24.137 թուրք (35%), 15.144 հայ (22%), այդ թվում 2577 կաթոլիկ, 12.370 թաթար (18%), 12.213 վրացի (17,7%), այդ թվում 4516 կաթոլիկ, 1313 հուդայական եւ միայն 58 մահմեդական, 2238 ռուս, այդ թվում մալոռուսներն ու բելոռուսները (3,3%), 1396 քուրդ (2%), 446 հրեա (0,6%), իսկ 1,4%-ը լեհ, հույն եւ այլ ազգեր[37]։

Ախալքալաքի գավառում բնակվում էր 72.709 մարդ, որից 52.539 հայ (72,3%), որից 6755 կաթոլիկ, 6569 թաթար (9%), 6451 վրացի (8,9%), որից 1 803 կաթոլիկ, 5453 ռուս, այդ թվում մալոռուսներն ու

---

[34] Տե՛ս А. Хаханов, նշ. աշխ., էջ 5։

[35] Տե՛ս Сборник сведений о Кавказе, под ред. Н. Зейдлица, т. 7, էջ XXXVIII–XXXIX:

[36] Տե՛ս Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893, էջ 25–31։

[37] Տե՛ս Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года, т. 69, СПБ, 1905, էջ 92–93։

բելոռուսները (7,5%), որից 4414 դուխոբորներ եւ այլ կրոնական շարժումների հետեւորդներ, 810 քուրդ (1,1%), 296 թուրք (0,4%), իսկ 0,8%-ը հրեաներ, լեհեր եւ այլ ազգերի ներկայացուցիչներ[38]։

Մարդահամարի տվյալներում բնակչության էթնիկ պատկանելությունը որոշվել է նրանց լեզվի հիման վրա, ինչի հետեւանքով էլ նախկինում «մահմեդական վրացիներ» համարվող մարդկանց զգալի մասը գրանցվել է որպես թուրքեր։ Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ԺԹ. դարի վերջում մահմեդական վրացիների մեծ մասը թուրքախոս էր կամ գերադասում էր խոսել թուրքերեն։ Նախորդ եւ հաջորդ տարիների հետ համեմատությունը, ինչպես նաեւ հենց մահմեդական վրացիների թուրքերեն խոսելու փաստը թույլ է տալիս ենթադրել, որ «թուրքեր» անվան տակ պետք է հասկանանք մեծ մասամբ մահմեդական վրացիներին, իսկ «թաթարների» անվան տակ՝ թարաքամաներին եւ թուրքմեններին։ Չպետք է բացառել, որ թուրքախոսները հայտնվելով թարաքամաների շրջապատում եւ հակառակը, կարող էին հեշտությամբ անցում կատարել օղուզական ծագում ունեցող մի լեզվից մյուսը, ուստի այս թվերը պայմանական են։

Նույն պատճառով էլ բարդ է որոշել հրեաների հստակ թիվը, քանի որ պարզ չէ՝ «հուդայական վրացախոսները» հուդայականություն ընդունած վրացիներ են, թե՞ վրացերեն խոսող «էբրաելի» կոչված հրեաներ։ Համեմատելով նախորդ տարիների տվյալների հետ, պարզ է դառնում, որ անցյալում հրեաների թիվը հաշվարկվում էր կրոնի հիման վրա։

Խնդիր է առաջանում նաեւ վրացախոս կաթոլիկների դեպքում, որոնց որոշ վրացի մասնագետներ համարում են կաթոլիկություն ընդունած վրացիներ[39], եւ անտեսում այն հանգամանքը, որ բնակվելով վրացական միջավայրում՝ հայ կաթոլիկները կարող էին ժամանակի ընթացքում խոսել վրացերեն, ինչը տեղի է ունեցել Վրաստանի այլ շրջաններում բնակվող հայերի հետ։ Բացի այդ, կան որոշ տեղեկություններ, որոնք վկայում են ԺԹ. դարի երկրորդ կեսին կաթոլիկ հայերի մի մասի վրացականացման մասին[40]։ Հարկ է նաեւ նշել, որ Ախալքալաքի գավառում բնակվող կաթոլիկների ճնշող մեծամասնությունն ըստ մարդահամարի

---

[38] Տե՛ս անդ, էջ 90–91։

[39] Ա. Սիմավորյան, *Սամցխե-Ջավախքի վրացացած հայ կաթոլիկները // Գլոբուս ազգային անվտանգություն*, № 6 (10), 2009, էջ 27–28. տե՛ս նաեւ Г. Мамулия, Концепция государственной политики в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность. https://www.ca-c.org/journal/cac-02–1999/st_19_mamulija.shtml (22.12.2018)։

[40] Տե՛ս Ա. Մելքոնյան, նշ. աշխ., էջ 467–468. տե՛ս նաեւ Ա. Սիմավորյան, նշ. աշխ., էջ 28։

տվյալների վրացախոս չէ, այլ ներառված է հայերի թվում, ինչը նույնպես նրանց վրացական ծագման վարկածի դեմ է։

1914 թ. վիճակագրական տվյալներով՝ երկու գավառների բնակչության թիվը հասել է 200.921։ Ախալցիխեի գավառում բնակվում էր 95.975 մարդ, որից 50.851 մահմեդական (53%), 27.149 հայ (28,3%), 7893 վրացի (8,2%), 3627 հրեա (3,8%), 1993 քուրդ (2%), 800 ռուս (0,8%) եւ այլ ազգերի ներկայացուցիչներ։ Ախալքալաքի գավառի բնակչությունը կազմել է 104.946 մարդ, որից 81.014 հայ (77,2%), 7185 ռուս (6,8%), որից 6891 այլ կրոնական ուղղությունների հետեւորդներ, 6 905 վրացի (6,6%), որից միայն 135 մահմեդական վրացի, 5839 մահմեդական (5,6%), այդ թվում 4586 շիա, 731 քուրդ (0,7%) եւ այլ ազգերի ներկայացուցիչներ[41]։ Այս տվյալներով էական աճ է գրանցվել գրեթե բոլոր ազգերի մոտ։ Վրացիների թիվը կրկին ցույց է տալիս միայն ուղղափառության հետեւորդներին։

Ախալքալաքի գավառում բնակվող «մահմեդականներն», ըստ էության, մեծ մասամբ հենց թարաքամաներն ու թուրքմեններն են։ Այդ են վկայում գավառի մահմեդականների մեծ մասի շիա լինելը։ Օսմանյան իշխանության տարիներին մահմեդականացած ժողովուրդները սուննիներ էին։ Իսկ Պարսկաստանի նախկին տարածքներից տեղափոխված թարաքամաները՝ շիաներ։

1926 թ. համախորհրդային մարդահամարի տվյալների համաձայն՝ երկու գավառների բնակչության ընդհանուր թիվը կազմել է 175.900 մարդ։ Ախալցիխեի գավառում բնակվում էր 96.973 մարդ, այդ թվում՝ 49.170 «թյուրք» (50,7%), 24.353 վրացի (25,1%), 15.565 հայ (16,1%), 3094 քուրդ (3,2%), 1678 ռուս (1,7%), 1045 ուկրաինացի (1,1%), 942 հրեա (1%), այդ թվում՝ 839 վրացական հրեա, 586 օսմանյան թուրք (0,6%)։ Բնակչության 0,5%-ը կազմում էին հույները, լեհերը եւ այլ ազգերի ներկայացուցիչները։ Հարկ է նշել, որ վրացիներից 11.658 մարդ, այսինքն վրացական բնակչության շուրջ 12%-ը, թուրքախոս էր։

Ախալքալաքի գավառում բնակվում էր 78 937 մարդ, այդ թվում՝ 57.791 հայ (73,2%), 7565 վրացի (9,6%), 6940 «թյուրք» (8,8%), 2679 ուկրաինացի (3,4%), 2492 ռուս (3,2%), 930 քուրդ (1,2%) եւ 0,6% այլ ազգերի ներկայացուցիչներ[42]։

---

[41] Տե՛ս Кавказский календарь на 1915 г., Канцелярия Кавказского Наместника, Тифлис, 1915, էջ 242–245։

[42] Տե՛ս Всесоюзная перепись населения 1926 г., т. 14, Москва, 1929, էջ 84–91։

1897 թ. մարդահամարի տվյալների համեմատ՝ «թյուրքեր»-ի եւ թիվը, եւ տեսակարար կշիռը կտրուկ ավելացել է, ինչը պայմանավորված է նաեւ նրանով, որ «թյուրքեր» անվան տակ նախկին «թաթարների», թարաքամաների, կարափափախների, թուրքմենների, թուրքերի (օսմանյան թուրքերի) եւ մահմեդական վրացիների հետ ներառվել են այլ թուրքախոս խմբեր: Վրացիների թիվը 1897 թ. համեմատ նվազել է վրացախոս հրեաներին եւ հայ կաթոլիկներին չներառելու պատճառով: Ախալքալաքի գավառում հայերի թիվն ավելացել է 1897 թ. մարդահամարի տվյալների հետ համեմատած, սակայն կտրուկ նվազել է 1914 թ. տվյալների դիմաց: Դա Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական զորքերի ներխուժման, հայերի կոտորածների եւ ռազմական գործողությունների հետեւանքն էր[43]:

Ախալքալաքի գավառում բնակվող նախկին ռուսների մոտ կեսը նշված է որպես ուկրաինացի, ինչը, ենթադրաբար, կապված է նրանց մինչ աքսորը բնակության վայրի (Տավրիկյան եւ Վորոնեժի նահանգների) հետ:

1939 թ. համախորհրդային մարդահամարի անցկացման ժամանակ Սամցխեի եւ Ջավախքի վարչատարածքային բաժանումն արդեն փոխվել էր: Նախկին Ախալցիխեի եւ Ախալքալաքի գավառների փոխարեն ներկայացված են Ադիգենի, Ախալցիխեի, Ասպինձայի, Ախալքալաքի եւ Բոգդանովկայի շրջանների տվյալները: Ադիգենի շրջանը, Ախալցիխեի շրջանը եւ Ասպինձայի շրջանի մեծ մասը նախկինում կազմում էին Ախալցիխեի գավառը, իսկ Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանները՝ նախկին Ախալքալաքի գավառը: Նախորդ տարիների հետ համեմատություն անցկացնելու նպատակով այդ շրջանների բնակչությունը կհաշվենք միասին: Այսպես, Ադիգենի, Ախալցիխեի եւ Ասպինձայի շրջանների բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 129.448 մարդ, որից 82 947 «ադրբեջանցի» (64%), 19.137 հայ (14,8%), 17.802 վրացի (13,8%), 3472 քուրդ (2,7%), 3112 ռուս (2,4%), 1050 հրեա (0,8%), 644 ուկրաինացի (0,5%) եւ մնացած 1%՝ հույն եւ այլ ազգերի ներկայացուցիչներ: Նշենք, որ հայերի մեծ մասը՝ 16.454 մարդ, բնակվում էր Ախալցիխեի շրջանում:

Ախալքալաքի եւ Բոգդանովկայի շրջաններում բնակվում էր 99.230 մարդ, որից 81.457 հայ (82,1%), 6 964 ռուս (7%), 5024 «ադրբեջանցի»

---

[43] *Տես* Ա. Մելքոնյան, *նշ. աշխ., էջ 272–285:*

(5,1%), 4950 վրացի (5%), 386 քուրդ (0,4%) եւ 0,9%-ը՝ հույներ, հրեաներ եւ այլ ազգերի ներկայացուցիչներ[44]։

1939 թ. մարդահամարը նախորդ երկու մարդահամարների հետ համեմատած ավելի սահմանափակ տեղեկություն է հաղորդում։ Քրդերից բացի շրջանների բոլոր մահմեդականներին գրանցել են որպես «ադրբեջանցիներ»։

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել հետեւյալ եզրակացության (տե՛ս աղյուսակներ № 1 եւ № 2)։

Ինչպես տեսնում ենք, Ախալցիխեի գավառում մահմեդականների (ժամանակակից մեսխեթցի թուրքերի) ընդհանուր թիվը 1873–1939 թթ. ընթացքում 21,4 հազարից հասել է շուրջ 83 հազարի, իսկ տեսակարար կշիռը 48,9%-ից 64,1%-ի։ Ոչ մահմեդական վրացիների թիվը նույնպես էական աճ է գրանցել՝ 3,2 հազարից հասնելով 17,8 հազարի։ Աճել է նաեւ նրանց տեսակարար կշիռը, 7,5%-ից հասնելով 13,8%-ի։ Հայերի թիվը Ախալցիխեի գավառում համեմատաբար կայուն էր եւ կազմում էր մոտ 15,5 հազար մարդ՝ աճ գրանցելով միայն վերջին տարիներին։ Սակայն, այլ էթնիկ խմբերի բնակչության թվի աճի պայմաններում, հայերի տեսակարար կշիռը շարունակաբար նվազել է՝ 35,5%-ից հասնելով 14,8%-ի։ Ախալցիխեի գավառում ռուսները մեծ թիվ չեն կազմել, իսկ նրանց թվի տատանումը եւ սեռային կազմը թույլ է տալիս եզրակացնելու, որ նրանք մեծ մասամբ զինվորականներ եւ պաշտոնյաներ էին, որոնք մշտական բնակիչներ չէին։ Քրդերի մոտ գրանցվել է կայուն բնական աճ, իսկ հրեաների թիվը շարունակաբար նվազել է։

Ախալքալաքի գավառում նույն ժամանակահատվածում թաթարների թիվը տատանվել է 4,4 հազարից մինչեւ 6,9 հազարի, իսկ տեսակարար կշիռը 8,8%-ից նվազել մինչեւ 5,1%։ Վրացիների թիվը 2,8–7,5 հազարի սահմաններում է տատանվել, իսկ տեսակարար կշիռը՝ 5%–9,6%։ Հայկական բնակչության թիվը կայուն աճ է գրանցել՝ 36,1 հազարից հասնելով մոտ 81,4 հազարի, իսկ հայերի տեսակարար կշիռը 72,5%-ից հասել է 82,1%-ի։ Ռուսների թիվը տատանվում էր 5–7 հազարի սահմաններում։ Նրանց տեսակարար կշիռն էլ 10,7%-ից նվազել է մինչեւ 7%։ Քրդերի թիվը եղել է աննշան։

---

[44] Տե՛ս Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=777 (05.01.2019):

Աղյուսակ № 1։ Ախալցիխեի գավառի բնակչության կազմը 1873–1939 թթ.

Տարեթիվը		Ընդամենը	Հայեր	Վրացիներ	Մահմ. վրացիներ	Թաթարներ[1]	Քրդեր	Ռուսներ	Հրեաներ	Այլ ազգեր
1873 թ.	բնակչության թիվը /մարդ/	43377	15415	3239	19000	2200	451	126	1972	1974
	%	100	35,5	7,5	43.8	5,1	1,0	0,3	4,5	2.2
1886 թ.	բնակչության թիվը /մարդ/	58791	15042	8285	14900	16125	1226	180	2641	392
	%	100	25,6	14,1	25,3	27,4	2,1	0,3	4,5	0,7
1897 թ.	բնակչության թիվը /մարդ/	68837	15144	10900[2]	24137[3]	12370	1396	2238	1759[4]	893
	%	100	22,0	15,8	35,1	18,0	2,0	3,3	2,6	1,3
1914 թ.	բնակչության թիվը /մարդ/	95975	27149	7893	-	50851	1993	800	3627	3662,0
	%	100	28,3	8,2	-	53	2,1	0,8	3,8	3,8
1926 թ.	բնակչության թիվը /մարդ/	96973	15565	24353	-	49170	3094	1678[5]	942	2171
	%	100	16,1	25,1	-	50,7	3,2	1,7	1,0	2,2
1939 թ.	բնակչության թիվը /մարդ/	129448	19137	17802	-	82947	3472	3112	1050	1928
	%	100	14,8	13,8	-	64,1	2,7	2,4	0,8	1,5

[1] Այս անվանումը պայմանական է և 1873-1897 թթ. ընթացքում գլխավորապես թարաքամաներին է ներառում։ Հետագա տարիներին նաև նրանց թվում են մահմեդական վրացիները, քանի որ վիճակագրական տվյալները թույլ չեն տալիս հաշվարկելու նրանց թիվը։

[2] Այդ թվում՝ վրացախոս կաթոլիկները։

[3] Սա շրջանի «թուրքերի», այսինքն՝ թուրքախոս մահմեդականների թիվն է, որոնք ի տարբերություն «թաթարների», խոսում էին թուրքերենի արևելյան բարբառներից մեկով։

[4] Վրացախոս հուդայականները ներառվել են հրեաների ցանկում, ինչպես մյուս տարիների տվյալներում։

[5] Այստեղ ներառված են միայն ռուսների թիվը, առանց ուկրաինացիների և բելոռուսների։

Աղյուսակ № 2։ Ախալքալաքի գավառի բնակչության կազմը 1873–1939 թվականներին.

Տարեթիվը		Ընդամենը	Հայեր	Վրացիներ	Թաթարներ[1]	Քրդեր	Ռուսներ	Այլ ազգեր
1873 թ.	բնակչության թիվը /մարդ/	49909	36163	2809	4404	292	5326	915
	%	100	72,5	5,6	8,8	0,6	10,7	1,8
1886 թ.	բնակչության թիվը /մարդ/	63799	46384	3741	6091	694	6674	215
	%	100	72,7	5,9	9,5	1,1	10,5	0,3
1897 թ.	բնակչության թիվը /մարդ/	72709	52539	6451[2]	6569[3]	810	5453	887
	%	100	72,3	8,9	9,0	1,1	7,5	1,2
1914 թ.	բնակչության թիվը /մարդ/	104946	81014	6905	5839	731	7185	3272,0
	%	100	77,2	6,6	5,6	0,7	6,8	3,1
1926 թ.	բնակչության թիվը /մարդ/	78937	57791	7565	6940	930	5171[4]	540
	%	100	73,2	9,6	8,8	1,2	6,6	0,7
1939 թ.	բնակչության թիվը /մարդ/	99230	81457	4950	5024	386	6964	449
	%	100	82,1	5,0	5,1	0,4	7,0	0,5

[1] Այս դեպքում թաթարների թիվը գլխավորապես ներառում է թարաքամաներին։

[2] Այդ թվում վրացախոս կաթոլիկները։

[3] Ներառված չեն 296 «թուրքերը», որոնք, ըստ էության, մահմեդականացած վրացիներն էին։

[4] Այդ թվում՝ որպես ուկրաինացի գրանցված դուխոբորների մի մասը։

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ Սամցխեում ու Ջավախքում օսմանական տիրապետության հաստատումից առաջ բնակչությունը գերազանցապես բաղկացած էր հայերից ու վրացիներից։ Օսմանյան տիրապետության շրջանում տեղի ունեցավ բնակչության մահմեդականացում։ Մինչեւ ԺԷ. դարի վերջը բնակչության էթնիկ կազմը պահպանվում էր, սակայն նրանց տոկոսային հարաբերակցության մասին դատել չենք կարող։ Հաշվի առնելով, որ այնտեղ մեծ թվով հայեր էին բնակվում, կարող ենք ենթադրել, որ նրանց մի մասը նույնպես մահմեդականացվեց եւ հետագայում մասնակցեց մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խմբի ձեւավորման գործընթացին։ Թե ինչքա՞ն է եղել նրանց թիվը, եւ ի՞նչ ազդեցություն են ունեցել նրանք այդ գործընթացում, աղբյուրները չեն հաղորդում։ Հայերի եւ վրացիների մի մասը կարողացել է պահպանել իր ինքնությունը եւ հավատքը, թեեւ կազմել է բնակչության համեմատաբար փոքր թիվը։

Օսմանյան տիրապետության շրջանում բացի տեղի բնակչության մահմեդականացումից, նաեւ այլ մահմեդական խմբերի ներգաղթ է եղել, ինչն էլ նպաստել է բնակչության հաղորդակցության լեզվի փոփոխությանը։ Նման խմբերն են եղել Օսմանյան կայսրության կենտրոնական շրջաններից եկած թուրքերը, ինչպես նաեւ թարաքամաները, թուրքմենները եւ քրդերը։

Ռուսական տիրապետության հաստատման արդյունքում՝ մահմեդական բնակչության մի մասը տեղափոխվեց օսմանյան կայսրություն։ Արեւմտյան Հայաստանից տեղի ունեցավ հայերի եւ հույների ներգաղթ։ Հարկ է նշել, որ հայերի ներգաղթն ընդամենը համալրեց շրջանի հայկական բնակչության թիվը, այլ ոչ թե «հայկականացրեց» այն։ Գլխավոր տարբերությունը տեղի եւ գաղթական հայերի միջեւ դավանանքն էր։ Գաղթականները Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ էին, իսկ տեղի հայերի զգալի մասը մահմեդականացումից խուսափելու համար ընդունել էր կաթոլիկություն։ Նման միտում է նկատվում նաեւ վրացիների մոտ, սակայն ավելի փոքր ծավալով։ Հետագա տարիներին հայերը կազմեցին Ախալքալաքի գավառի բնակչության հիմնական մասը, իսկ Ախալցիխեի գավառում նրանց տեսակարար կշիռը հետզհետե նվազեց։

Վիճակագրական տվյալների վերլուծությունից երեւում է, որ Սամցխեում եւ Ջավախքում բնակվող մահմեդականները, որոնք հետագայում կազմեցին մեզ հայտնի մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խումբը,

մեկ դարի ընթացքում բնակչության 1/5 մասից կազմեց նրա 2/5 մասը։ Այդ գործընթացում մասնակցություն ունեցան մահմեդական վրացիները, թարաքամաները, թուրքմենները, թուրքերը եւ հայերը։ Թարաքամաները եւ թուրքմեններն ընդհանուր առմամբ կազմել են նրանց մոտ 1/3 մասը։ 2/3-ում գերակշռում են մահմեդական վրացիները։ Թուրքերը եւ օսմանյան տիրապետության տարիներին մահմեդականացած հայերը նույնպես մտել են մահմեդական վրացիների թվի մեջ, սակայն նրանց թիվը պարզել հնարավոր չէ։

РЕЗЮМЕ

В данной статье изучается этнический и религиозный состав населения исторических регионов Самцхе и Джавахк и демографические изменения в промежутке времени с установления османской власти в конце XVI века до 1939 года. С этой целью детально представлены и анализированы данные переписей, а так некоторых важных источников, отражающих этнический и религиозный состав населения. Использованы так же и другие источники, которые сообщают косвенные данные о населении указанных территорий.

SUMMARY

This article examines the ethnic and religious composition of the population of historical regions Samtskhe and Javakheti and demographic changes in the period from the late 16th century, when those regions were conquered by the Ottomans, to 1939. For this purpose, census data, as well as some important sources reflecting the ethnic and religious composition of the population are presented and analyzed in detail. Other sources that provide indirect data on the population of these territories are also used.